

4. Պոլիսը, դրամական տաղնապներու մասնուած է և Պոլսեցի հարուստներ ի վիճակի չեն օգնելու այս կարևոր հաստատութեան, կարժէ որ արտասահմանի հայ հարուստներ իրենց նըպաստները նուիրեն Դպրեվանքին՝ Թուրքիոյ Հայոց Պատրիարքին ձեռքով:

*
* * *

Մ Ա Ն Ի Լ ՈՒ Ի Բ Ե Բ

— Մարտի 8-ին Նոր-Նախիջևանում կայացել է հոգևոր համերգ, որին մասնակցել է նաև հայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցու երգեցիկ խումբը հայր. սարկ. Չորէքչեանի ղեկավարութեամբ: Համերգը եղել է խառն՝ Լատինական, հայկական, հրէական հոգևոր երգերի: Հայկական երգերի երկրորդ բաժինը առանձնապէս աչքի է ընկել իւր արժանաւորութեամբ: Հ. Սարկ. Չէորէքչեանը արժանացել է զլաւ և հմուտ երաժշտի կոչման: —

— Եղբ. Տէր Մկրտչեանները (Ասխաբադ) նուիրել են Բաքուի Հայոց Կուլտուր. Միութեան Շոշու գաւառի Թաղլար գիւղում գտնուող իրենց 6000 ռուբլի արժեցող մի տունը և 2000 ռուբլի էլ փող այդ տունը հիւանդանոցի վերածելու առթիւ պահանջուելիք ծախքերը հոգալու համար: —

— Մարտի սկզբներում Պոլսի Խազգիւղի մեծ մասը հրդեհին զոհ է գնացել: Այրուած է 350 տուն, 5 վարժարան, մէկ սինագոգայ, 6 սրճարան, 6 գինետուն, 5 խանութ: Այրուած աները համարեա ըտրոր հրէական են: Շուրջ 2500 ընտանիք հրկիզուած են: («Մանգ. էֆ»)

— Մարտի 1-ից Թոյլատրուած է ամենուրեք ստորագրութիւն ընծալ աշխարհահռչակ ծովանկարիչ Յովհ. Այվազովսկու արձանի համար: Արձանը դրուելու է մեծ նկարչի ծննդավայր — Թէոդոսիայում:

— Մինչև այժմ Ռուսաստանում հեռագրերը ընդունում էին միմիայն պետական լեզուով (բացառութեամբ Լեհաստանի և արևմտեան Ռուսաստանի մի քանի քաղաքների): Այժմ, ինչպէս հաղորդում է «Завказье»-ն (№ 59), ներքին գործոց Նախարարը Թոյլատրել է հեռագրեր ընդունել հեռագրատան-

բում ամեն լեզուով: Միայն թէ իշխանութիւնը պահանջելու գէպքում հեռադրատէրը պարտաւոր է տալ հեռագրի ճիշտ թարգմանութիւնը:

— Կովկասի Հայ. Բար. Ընկերութիւնը որոշել է Արեշեանի տունը (Թիֆլիսում) վերաշինել և վերածել «Կենտրոնական հայկական գրադարանի» և սորան կից ընթերցարանի, ուր էլէքտրական լուսոյ տակ կարող կլինին պարապել մօտ 250 հոգի: Վերաշինութեան ծախքը, որ ենթադրոււմ է մօտ 25,000 ռուբլի, յանձն է առել Պետրովսկի քաղաքի վաճառական պ. Աղէքս. Խաչատր. Ղարաջեանցը: Այս բարեգործ հայ վաճառականը բացի դորանից, երկու տարի շարունակ նոյն Բարեգործական Ընկերութեան տուել է ամսական 60 ռուբլի, 20 աշակերտի ձրիապէս ճաշ տալու համար:

Ընկերութիւնը գնահատելով պ. Ղարաջեանի բարեգործութեան եռանդը, որոշել է՝ 1 նոր գրադարանը կոչել Ղարաջեան, 2 նորան Ընկերութեան պատուաւոր անդամ ընտրել և 3 կախել նորա պատիւերը ապագայ գրադարանի դահլիճում:

— Բարձրապատիւ հայր Կոմիտաս վարդապետը մարտի վերջերին Բաքում Հայ. Կուլտուր. Միութեան հրաւիրանօք 2 հրապարակական դասախօսութիւններ է կարդացել հայկական հոգևոր և աշխարհական երաժշտութեան մասին: Երկու դասախօսութիւններին էլ ունեցել է, ինչպէս միշտ, մեծ յաջողութիւն: Թողնելով ունկնդիր հասարակութեան վրայ խորը տպաւորութիւն և տալով ճաշակ մեր ազգային ժողովրդական երաժշտութեան:

— Երգ. հաւատ. Գր. Իւզբաշեանը 100 ռուբլի պրէմիա է առաջարկել Հայ. Բար. Ընկերութեան, որ սա յատկացնի այդ գումարը մի բրօշուրի տպագրութեան, որտեղ ցոյց տրուած կլինին բարեգործութիւն անել ցանկացողների համար դործնական միջոցներ:

— Անդրեազործ Ս. Մերկուրովը, որ պատրաստել էր հանգուցեալ Միրտիչ Կաթուղիկոսի բիւսաք, այժմ աւարտել է արգէն երկրիս Փոխաբքայ Կոմս Վորսնցով—Պաշկովի մեծադիր արձանի մոդէլը:

— Կովկաս. Հայ. Բարեգործ. Ընկերութիւնը թոյլ է տուել ճիւղեր բանալու՝ Վաղարշապատում, Երևանում, Արմաւիրում, Գանձակում, Թելաւում, Ղազախում, Լազոդախում, Շուշում, Քութայիսում, Քարվանսարայում, Ալէքսանդրոպօլում, Կար-

սում, Ախալցխայում, Ախալքալաքում, Արգահանում, Նախիջևանում և Նիժ գիւղում:

— Վերջերս Պետերբուրգում ականաւոր ռուս գրողներէնց հազմուած էր մի յանձնաժողով, որ ձեռք էր առել դարուս համամարդկային նշանաւոր փիլիսոփայ Լ. Տոլստոյի ութսունամեակը շքեղապէս տօնելու նախաձեռնութիւնը: Այժմ ռուս փիլիսոփայն ու իւր կենը յանձնաժողովին դրած նամակներով խնդրում են յետ կենալ այդ մտքից և իւր ծերութեան հասակում թողնել իրեն հանգիստ ցնցող տեսարաններէնց: Յանձնաժողովը յարգելով հանճարաւոր հոգեբանի խնդիրը, որոշել է յոբելեանական այդ հանդիտի փոխարէն ձգտել ատրածել մեծ դրոյի գաղափարները, — մի, այսպէս ասած, Տոլստոյեան ընկերութիւն հիմնել՝ շինելով Տոլստոյի անուամբ մի թանգարան և ժողովելով բազմատեսակ նիւթեր մեծ գրողի ու փիլիսոփայի կեանքին վերաբերեալ:

— Մարտի 30-ին Թիֆլիսում կայացած Հայ. Ազգագր. Ընկերութեան ժողովում որոշուել է՝ 1. Կրագարաններ բանալ Շուշում, Ախալքալաքում և Նախիջևանում և 2 Պրոֆ. Մառին ընտրել Ընկերութեան պատուաւոր անդամ: Իսկ ընկերութեան վարչութեան անդամ ընտրուել են տիկնայք՝ Դոլուխանեան, Իօաննիսեանի, Ղարաջեան, քննիչ յանձնաժողովի անդամներ՝ պ. պ. Մամուլեան, Բարսամեան, Շիրինեան և Խմբագրական յանձնաժողովի — պ. պ. Ս. Յակովբեան և Ս. Տէր Աւետիքեան:

— Մի անյայտ բարեգործ 100 ռ. է ուղարկել պրոֆ. Մառին, որ սա նորոգել տայ Անիի Հովուի եկեղեցին, որպէսզի ճարտարապետական այս կերտուածքը չկործանուի:

— Ապրելի 1-ին Թիֆլիսում հողին են յանձնել մօտ քսան տարի ներսիսեան դպրանոցում ուսուցչական պաշտօն վարած Աղ. Մելիք-Ալլաւերտեանի մարմինը: Մանկավարժական այս սպասաւորի յուղարկաւորութեան մասնակիցել են ինչպէս ներսիսեան դպրոցի ուսուցչական կազմը, հոգաբարձութիւնն ու աշակերտութիւնը, նոյնպէս և Թիֆլիսի քաղաքագլուխը, քաղաքային վարչութեան անդամները, հասարակական զանազան գործիչներ, արհեստագիտական դպրոցի ուսուցիչներն ու այլ բարեկամներ:

— Ապրելի 1-ին, փոխարքայի պալատում բացուեց Հայոց եկեղ. դպրոցներէ համար կանոնադրութիւն մշակող յանձնա-

ժողովի նիստը, նախագահութեամբ Փոխարքայի խորհրդի անգամ Մ. Հակիկէլի: Ս. Էջմիածնի ներկայացուցիչներն են յաճնաժողովում հ. Մեսրոպ վարդապետ Տէր Մովսիսեան, երգ. հաւ. Ս. Մամիկոնեան ու Ս. Տիգրանեան:

— Մարտ ամսում Թաւրիզում վախճանուած այրի տիկ. Հռիփսիմէ Գրէնֆիլդը կտակել է Արամեան դպրոցին մէկ հազար և հայուհեաց ընկերութեանը հինգ հարիւր ռուբլի:

— Ապրելի 3-ին Քիֆլիսում տեղի ունեցաւ մի հայ նշանաւոր ջութակահարի նուագահանդէսը. այդ հայը Հայկ Գիւլդէնեանն է, որ իւր գեղարուեստական ուսումն աւարտել է հռչակաւոր Թոմասի (Բրիւսսէլ), Շէվչիկի (Պրագա) և Մարկիզի (Բերլին) մօտ:

— Ի նպաստ Թիւրքական Հայաստանի Մասնաժողովը ստացել է Խարկովի հայ հասարակութեան հանդանակած 604 ռուբլի:

— Երզնիսքանական «Նաթարալա» թերթի խմբագրերը թոյլաութիւն է խնդրում կառավարութիւնից հրատարակելու Քիֆլիսում մի ամենօրեայ լրագիր Մամուլ անունով, հեան էլ մի պատկերազարդ շաբաթաթերթ Դարդուբալս անունով:

— Քիֆլիսում լոյս է տեսել Գարեգին Անտեսնի խմբագրութեամբ «Գեղարուեստ» ամսագրի Ա. համարը շքեղ պատկերներով և ճոխ բովանդակութեամբ:

— Հայոց Գրամատիք. Ընկերութիւնը Քիֆլիսում այս տարի ևս տահմանել է 3 մրցանակ (Ա. և Բ. 150-ական ռուբլի և Գ. 100 ռ. ամենալաւ գրամատիքական ինքնուրոյն և 100 ռուբլի թարգմանական գրուածքների համար:

— Տոլստոյի Քիֆլիսի յորեկեանական մասնաժողովը որոշել է մեծ գրողի անուան մի ճոխ և բաղմաբովանդակ ժողովածու հրատարակել 2 ստուար մասերից բաղկացած:

— «Մեր ձայնը» հաղորդում է, որ շուտով լիբրանտուելու է «Նոր—Գար» լրագրի հրատարակութիւնը Սպ. Սպանդարեանի խմբագրութեամբ, առ այժմ շաբաթը 2 անգամ, իսկ դալ աշնանից—ամենօրեայ:

— Նոյն թերթը հաղորդում է, որ Մոսկուայում մտադրութիւն կայ տօնելու «Հանգէս գրականական»ի խմբագիր Մ. Բարխուդարեանի 25 ամեայ գրական գործունէութիւնը:

— Յայտնի բանասէր պ. Կ. Կոստանեացը արդէն վերջացրել է իւր Հայոց եկեղեցական պատմութիւնը, որի Ա. հատորը մօտ ժամանակներս յանձնուելու է տպագրութեան:

— Ականաւոր դերասանուհի տիկ. Հրաչեան գրել է իւր թատրոնական յիշողութիւնները, որ մի սառւար հասար պէտք է լինի:

— Նորերս Պօլսում վախճանուած հայազգի վաղամեռիկ դուկտոր Վարդազարեանը թողել է մի կտակ յանուն Պօլսոյ պատրիարքի, որով 2000 անգլիակ. սակի է յատկացնում իբրև դրամագլուխ, որի տոկոսներով ամեն տարի Պօլսոյ թաղերից մի հայ որբ օրիորդ (հասակը 25-ից սչ աւել և նախնական կրթութիւնը յաջողութեամբ աւարտած) պէտք է ամուսնացնել մի հայ. երիտասարդի հետ (նոյնպէս նախնական կրթութիւնը յաջողութեամբ աւարտած և տարիքը 35-ից սչ աւելի), տալով նորան իբրև օժիտ յիշեալ գումարի տարեկան տոկոսիքը:

— Թաւրեղեցի հարուստ Նազարէկեանները իրենց Վիէն-նայում վախճանուած եղբոր յիշատակին նուիրել են Թաւրիզի Կենտրոնական դպրոցին 500 թուման, Հայուհեաց ընկերութեան հարիւր և Ազգատախնամին 50 թուման:—

— Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական ընկ. 1907 թուին ունեցել է մուտք 8687 ռ. 84 կոպ. և ծախք 7388 ռ. 88 կոպ. իսկ առ 1 յունուարի 1908 թիւ ընկերութիւնն ունի 28, 116 ռ. 21 կոպ. 1907 թուի ընթացքում ընկերութիւնը պահել է կար ու ձեռն արհեստանոց, ուր սովորել են 127 աշակերտուհի, որոնցից աւարտել են 14 հոգի: Ընկերութիւնը 33 չքաւոր աշակերտուհիներին տուել է կօշիկ, հագուստ, դասական պիտոյքներ. Ընկերութեան 1908 թուի նախահաշիւն է 7731 ռ. իսկ անգամների թիւն 200:—

— Լազարեան ձեմարանի խորհուրդը յայտարարել է ի գիտութեան բանասէրների մրցանակի երեք նիւթեր, մէկը 700 ռ., երկուսը 500-ական: Նիւթերը պէտք է լինին՝

1) Բարբառագիտական բառարան հայ լեզուի—բարբառներից մէկի և միւսների ձայների և քերականական ձևերի համառօտ տեսութեամբ:

2) Մուշի և Սասունի հայ ժողովրդի մանրամասն ազգագրական նկարագիրը (համաձայն «Ծրագիր հայ ազգագրութեան և ազգային իրաւաբանական սովորութիւնների, Գր. Խալաթեանցի, Մոսկուա, 1887 թ.):

3) Էրզրում գաւառի հայ ժողովրդի մանրամասն ազգագրական նկարագիր (համաձայն նոյն ծրագրի):—

Աշխատութիւնները կարելի է գրել՝ հայերէն կամ ռուսե-

քէն, ֆրանսերէն կամ գերմաներէն և պէտքէ ներկայացուին ձեմարանի խորհրդին 1910 թ. ապրիլի 10-ից ոչ ուշ:

— Անցեալ ամիս Վենետիում Գերմանիոյ Թագուհին — Աւգուստա Վիկտորիան և կայսերական իշխանազունները այցելել են Ս. Ղաղարի Մխիթարեան հարց վանքը, ընդունուել են պատշաճաւոր շուքով վանքի Մատենադարանի մեծ սրահում, որտեղ զետեղուած են թանկագին հնութիւններ, ձեռագիրներ և հայերէն դրչագիրներն մի ընտիր ժողովածու: Միաբանութիւնը ի միջի այլոց ցոյց է առել կայսրուհուն Ֆրիդէրիկ կայսեր 1854 թ. վանքին ընծայած և իւր իսկ ստորագրութիւնը կրող իւր կենդանագիրը: — Կայսրուհին այցելելէ և վանքի դպրոցն ու ընական գիտութեանց սրահը, որտեղ դիտել է Ապանիոյ արքայազուն Գոն Կարլոս բուրբոնի վանքին նուիրած նոխ ժողովածուն: Գիտել են և տպարանական մամուլներն ու վանքի սիրուն պատէզը և եկեղեցին, ուր Իտալիոյ Մարգարիտա Թագուհու ընծայած շքեղ վարագոյրը և այլ իրեր դիտելուց յետոյ, վերադարձել են ընդունելութեան սրահը, որտեղ կայսրուհուն և իշխանազուններին մատուցուել է վանքում պատրաստուած վարդանոյշ: Միաբանութիւնը մատուցել է բարձր հիւրերին վանքի տեսարանները և հիմնարկութիւնների լուսանկարներն եւ շքեղ պատկերազարդ հրատարակութիւններ: Կայսրուհին և իշխանազունները հեռացել են վանքից մեծ գոհունակութիւններ յայտնելով Միաբանութեան:

— Աստրախանում շուտով լոյս է տեսնելու առայժմ շաքաթը մի անգամ հայերէն Լրաբեր անունով մի թերթ:

— Մօտերս վախճանուած Թիֆլիսեցի հարուստ տիկ. Կատ. Նազիրեանը թողել է մի կտակ, որով իւր կարողութեան 300/0 յատկացրել է Շուլավէրի հասարակութեան, 300/0 ներսէսեան Գպրանոցին, 300/0 Աւրմիոյ հայերին, 100/0 Էջմիածնի վանքին, որ մի դպրոց կառուցուի Հայրիկի անունով:

— Ապրելի 16-ին Բաքում կարգացել է իւր առաջին գատախօտութիւնը յայտնի գրականագէտ և Հայոց գրականութեան քննադատ Իւր. Վիսելօյսիկին, հրաւիրանօք Բաքուի Հայ. Կուլտուր. Միութեան: Այդ դասախօտութեան նիւթն է եղել հայոց գրականութեան վաթսուներկու թուականների շրջանը:

— Ապրիլի 7-ին Թիֆլիսի հայոց Առաջնորդարանում անդի է ունեցել Ղուկասեան մրցանակաբաշխութեան հանդէսը: Մըրցանակների են արժանացել ներկայացրուած աշխատութիւններից 1) Ե. Լալայեանի «Նոր բայագեօ գաւառ կամ Գեղարձուցիչ»

և 2) Մ. Աբեղեանի «Հայ ժողովրդական առասպելներ» աշխատութիւնները. առաջինը 300 ա., երկրորդը 200 ա.:

— Պօլսի պատրիարքարանի նորերս հրատարակած դպրոցական վիճակացոյցից երևում է, որ առ 1 յունուարի 1908 թիւ Պօլսի բոլոր թաղերում Հայոց վարժարան—դպրոցների թիւը եղել է 42, որտեղ սովորում են 5379 հոգի, որոնցից աշակերտ 2924 և աշակերտուհի 2450: Բոլոր դպրոցներում դասաւանդել են 294 հոգի, որոնցից 168 ուսուցիչներ և 126 վարժուհիք: Գրպրոցները պահուում են եկեղեցիների անդուհիների օժանդակութեամբ (50454 զր.), աշակերտների թօշակադրամով (31557 զր.) և մասնաւոր նուէրներով (2220 զր.), որով ամսական ծախք բոլոր դպրոցների վրայ գնում է 84231 զր.:

Բացի այս դպրոցներից Պօլսում հայ մանուկներ յաճախում են և պետական ու այլ դպրոցներ, մօտաւորապէս 1500 հոգու չափ:

Գպրոցները զանազան տիպի ու դասընթացքի են:

Մ Ա Մ Ո Ւ Լ

«Հասկեր», Թիֆլիս, 1908 թ. № 1 և 2. վերջերս մեզանում միակ կանոնաւոր հրատակուող մանկական ամսաթերթն է այս և արդէն յաջողութեամբ թեւակոխել է Գ.—րդ տարին: Երկու համարներն էլ ճօխ են բովանդակութեամբ, պատկերազարդ և հայ մանկան մատչելի թերթին աշխատակցում են մեր յայտնի գրողները՝ Յով. Թումանեան, Աւ. Ահարոնեան, Աւ. Իսահակեան և ան. Սիրուն են առաջնի կենսունակ, ճօխ ժողովրդաբարբառով ոտանաւոր առակներ—հէքեաթները («Չարի վերջը», «Խօսող ձուկը»), երկրորդի գողտրիկ պատկերը աշակերտական կեանքից («Գունատ տղան»), երրորդի սիրուն այլաբանական զրոյցը («Արևի մօտ»):

«Հասկերն» ունի նաև «մանկավարժական գրադարան», որով խմբագրութիւնը առանձին գրքոյկներով տալիս է իւր ընթերցողներին ընտիր երկերի թարգմանու